դէպի Զանգեզուրի սահմանները, ամրանալ Թթու Ջրի բարձունքներում եւ սպասել նոր կարգադրութեան:

Ադրբէյջանի կառավարութեան որոշումների մասին, Կ. Կոմիտէն յայտնում է Ինքնապաշտպանական Մարմնին եւ առաջարկում է Շուշի անցնել՝ խորհրդակցելու:

Ինքն. Մարմնի անդամներից Ա. Ա-ն եւ Ֆ. Մ-ն, դաղտնի անցնում են Շուշի եւ Կ. Կոմիտէի հետ խորհրդակցելուց եւ մանրամասն տեղեկութիւններ իմանալուց յետոյ վերադառնում են Ֆծարբերդ*) գիւղը ու Ինքն. Մարմնի յատուկ սուրհանդակի միջոցով Հոկտեմբեր 29-ին ծածկագիր նամակով, յայտնում են Զանգեզուրի իշխանութեանը, Ա. Շ-ին, Ադրբէյջանի զօրքերի քանակի, դասաւորման եւ նոյնիսկ թէ երբ պիտի յարձակողականի դիմեն:

Սուրհանդակը անփորձ տեղ հասնելուց յետոյ, Կոռինձոր գիւղից կրակներ պիտի ցոյց տային:

Ֆծարբերդին մօտիկ բլուրից պարզ երեւում է Զանգեզուրի Կոռինձոր գիւղը. իսկ եթէ գիւղից դէպի ձախ մի հարիւր քայլի վրայ դանուող սարը բարձրանաք, այն ժամանակ ամբողջ Զանգեզուրն է ձեր աչքի առաջ:

Սուրհանդակը նոյն երեկոյեան անփորձ հասնում է Կոռինձոր գիւղը եւ կրակներ են ցոյց տալիս:

Ինքնապաշտպանական Մարմնի անդամները, այլեւս չեն սպասում սուրհանդակի վերադարձին ու անցնում են Վարանդա՝ իրենց աշխատանքները շարունակելու:

Կ. Կոմիտէի եւ Ինքնապաշտպանական Մարմնի կատարած այդ աշխատանքը, մեծ նշանակութիւն է ունենում Զանգեզուրի համար, որովհետեւ մինչեւ այդ տեղեկութիւններ ստանալը, նա խոր քնի մէջ է լինում:

Ճիշդ է, Հայաստանի Հանրապետութիւնը որոշ տեղեկութիւններ յայտնել էր, որ Ադրբէյջանը պատրաստութիւնների մէջ է, բայց հաստատ չգիտէին թէ ե՞րբ եւ ո՞ր ուղղութեամբ պիտի շարժուին նրանց զօրքերը:

*) Ֆծարբերդ գիւղը Դիզակի արեւմտեան շրջանումն է եւ սահմանակից է Զանգեզուրին:

Ինքն. Մարմնի եւ Կ. Կոմիտէի տուած տեղեկութիւններից յետոյ միայն, Զանգեզուրը դասաւորում է իր ուժերը եւ պատրաստ վիճակում սպասում է Ադրբէյջանի յարձակումներին:

Երկու մարմինների տուած տեղեկութիւնները, ճշտութեամբ կատարւում են: Ադրբէյջանի մեծաքանակ զօրքերը՝ ութից-տասը հազար, Հաջի Սամլուի քրդերը Սուլթան բէկ Սուլթանովի գլխաւորութեամբ, գեներալ Շիխլինսկու հրամանատարութեամբ, Նոյեմբեր 4-ին 1919 թիւ, չորս ուղղութեամբ՝ Կոռինձորի, Զաբուղի, Խուլնավարի, յարձակւում են Զանգեզուրի վրայ:

Կռիւը տեւում է երեք օր: Թշնամին առաջին եւ երկրորդ օրը յաջողութիւններ է ունենում, բայց երրորդ օրը ջարդուելով փախուստի ճամբան է բռնում:

Զանգեզուրի կառավարութիւնը եւ հրամանատարական կազմը այդտեղ մի թեթեւ վրիպում են կատարում: Փոխանակ թշնամուն հեռացնելու եւ նրա թողած ռազմամթերքն ու թնդանօթները գրաւելու, բաւականանում են երկրի սահմանները ամրապնդելով:

Ադրբէյջանի զօրքերը յաղթուելով, խուճապի են մատնւում եւ տարբեր ուղղութիւններով ցրւում:

Նրանից շատերը, Քիրս լերան փէչերով անցնում են Դիզակի շրջանի հայկական գիւղերը, դէնքերը յանձնում են գիւղացիներին եւ խնդրում են իրենց ճանապարհ տալ՝ դաշտային մասը անցնելու. իսկ միւս մասը նահանջում է խճուղիով դէպի Ասկեարան եւ կոտորում է ճամբին պատահած անդէն հայ գիւղացիներին, որոնք մթերք էին տանում Շուշի ծախելու:

Ադրբէյջանի այս մեծ անյաջողութիւնից յետոյ, Ղարաբաղում ստեղծւում է անիշխանութիւն: Թաթար աւազակային խմբերը աւելի են կրկնապատկւում ու ալան-թալանի մատնում հայկական շրջանները: Նրանք իրենց համար երգ էին հիւսել.

1. Գարա չեօրաֆ եյարամ,
2. Ղարաբաղդան չըխմանամ,
3. Զանգեզուրա գէթմանեամ,
4. Զաբուղ չայը քէչմեանեամ: